

*Հ Ա Յ Զ Բ Ե Խ Ա Խ Ե Ր Ի Գ Ր Ա Գ Բ Ք Ե Ր Ե Ն*  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԽՈՐԵՆ ՔԱՅ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑԻ.

№ 2

# Ե Ր Գ Ա Ր Ա Ն



Պ լ ւ ն է 20 կող.

Թ Ի Ց Լ Ի Ռ

Առաստիպ Նաղեմդաւ Ահմեն. փ. № 4

1909

891.99-192

Հ - 25

Արմ.

H 2-4602a

2-4602a

10 NOV 201

ՀԱՅ ԶԻՆՈՒԹՅՈՒՆ ԿՐՈՒԴՈՒՅՆ

ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ և ՔԱՅ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑԻ.

891.99-192 № 2

հ-25

914

Ե Բ Գ Ա Բ Ա Ն

Կ Ա Շ Խ Ե ց

Հ. ՀԱՅԿԱԼՉՈՒՆԻ

ԱՆԲ. № 22877

ԹԻՖԼԻՍ

Արագածոտն Օնադեժդա, Սեմեն. Փ. № 4

1909

05.06.2013

+2.555

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ

### Ե Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Քեզի մեռնիմ էջմիածին  
Ազատարար Աստուածածին.  
Նանի, նանի, նանի, նանի ջան:  
Էջմիածին հայոց հաւատ,  
Լուսաւորչի թողած աւանդ.  
Նանի... և այլն:  
Լուսաւորիչ լոյսի միջին  
Լուսով ցօղեց էջմիածին.  
Նանի... և այլն:  
Գրիգորի ձեռակերտ տուն  
Յաւէտ մընաս գու հաստատուն:  
Նանի... և այլն:  
Հսա Ցով, Մալխասեանի.



39847-67

### ՄԵՌՆՈՂ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ ԵՐԳԸ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,  
Բայց հանգիստ եմ ես հոգով,  
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,  
Օրհնում եմ քեզ Աստուծով:  
Հեռանում եմ, անդին ընկեր,  
Չ' գնահատուած հչոքից,

Բայց հաւաստեաւ անձնանուէր  
Աղղիս մշակ կը հաշուիմ:  
Աղսիւ ընկեր, չը մոռանաս,  
Անդաւաճան, ջերմ սիրով  
ես սիրել եմ իմ հայրենիք,  
Գընա և գու նոյն շաւղով:  
Խեղճութիւնը Հայոց ազգի  
Կարեկցաբար մըտածիր.  
Ուկէ գրքոյին Եղիշէի  
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր:  
Այստեղ սուրբ կրօն, ազգ միաբան  
Ազատ կամքով ու խըղճով,  
Այստեղ Վարդան, անման Վարդան  
Իւր խընկելի քաջիրով.  
Հայրենիք, սեղան սրբութեան,  
Ես Աստուծոյ առաջն  
Շատ կաղաչեմ, շատ կարտասուեմ,  
Որ ծագէ քեզ նոր արև:  
Իմ մտերիմ, մահըս մօտ է,  
Բայց հանգիստ եմ ես հոգով,  
Որովհետեւ խիղճս արդար է,  
Ճրշմարտութեան ջատագով:  
Ս. Շահազիզեան

Հ Ա Յ Ա Տ Ա Ն

Հայտատան, երկիր գրախտավայր,  
Դու մարդկայնոյ ցեղիս որրան,  
Դու և բնիկ իմ հայրենիք,  
Հայտատան, Հայտատան, Հայտատան:  
Ի վեհ անունդ սիրտ իմ, ոհ, յոյժ

Ոգեսրի 'ի նոր խրախոյս,  
Եւ անձկայրեաց 'ի քեզ յուսամ,  
'ի քեզ, 'ի քեզ, յայս իմ միայն  
Հայտատան, (3 անգամ)  
Հայտատան անուն փարելի,  
'ի քեզ հանգիստ Նոյեան տապան  
Եգիտ, և քե ապրեցաւ Նոյ,  
Հայտատան, (3 անգամ):  
Գետք քաջառաջք աղենաբռւղիս  
Զհողդ բարի առնեն յուոթի,  
Քե ապրիմ ես, քե միշտ ցնծամ,  
Քե, քե պանծամ փառք իմ միայն  
Հայտատան, (3 անգամ):  
Հայտատան ծնող գիւցազանց  
Եւ հրաշլեաց հանդիսարան,  
Քո զեփիւսին քաղցր է հնչիւն,  
Հայտատան, (3 անգամ):  
Զոր շնչեցին և զօրացան  
Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,  
Տրդատ, Ամբատ, Վարդան, Վահան,  
Զքեղ յիշեմ, զքեզ սիրեմ,  
Զքեզ, զքեզ, սէր իմ միայն  
Հայտատան, (3 անգամ):  
Յ. Միրզա-Վահանգեցի:

Շ Ո Ւ Շ Ա Ն Ի Կ

Է՛ր հեռանաս քո մայրենի աշխարհից,  
Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից.  
Մեր ամենիս զու մայր էիր գթառատ,  
Արդ հեռանաս, մեզ մութ պատէ անփառատ:

Քո սուրբ ձեռօք մեր վէրքերը շտա անգամ  
կուանայիր, գեղ դնէիր ամեն ժամ,  
Քո մազերից ոլորէիր վիրակապ,  
Քո բոլոր կեանքդ ազգիդ համար էր ագապ:  
Արդ Հայոց գորքն իւրեանց մօրից որբանայ,  
Վրաց ազգը քո խընամօք պերճանայ,  
Հայաստանը զրկի իւր սուրբ Շուշանից  
Վրաստանը բուրէ հոտով քաղցրովից:  
Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրուհի,  
Մեր սիրտ հոգին քեզ հետ տանիս մաքրուհի.  
Դնաս բարեաւ մեր լոյս հաւատն քեզ ընկեր,  
Աջն ու խաչը քեզ պահապան զօր գիշեր:  
3. Կարինեանց:

### ՀԱՅ Ա. Ղ. ԶԻԿՆԵՐ

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ.  
Երբ միտս էք գալիս, ասում հս «ախ»,  
Հալւում եմ, հալւում օտարութեան մէջ,  
Ախ, սիրտս խորում. ցաւիս չը կայ վերջ:  
Երբ կարմիր գինին բաժակրումս նծած,  
Սեղանիս վրայ առաջս է զրած,  
Աչքս ակամայ վրան եմ ձգում,  
Զեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում:  
Տեսնում եմ և, միս, միտքս է մոլորում,  
Գառն արտասունքով աչքս պղառում,  
Կարծում եմ բոլոր աշխարհը մթնեց,  
Արևն էլ խաւրեց, էնդուր որ ախրեց:  
Հայոց աղջիկներ ձեր հոգուն միոնիմ,  
Զեր սիրուն տչերն էլ Երբ կը տեսնեմ,  
Էն ոև ոև աչերն՝ ոև ունքով պատած,  
Կարծես երկնային դալամով քաշած:

Էն ոև ոև աչել ն, որ շատին սպանեց,  
Բայց էլի շատ ին դժողբից հանեց.  
Ես էլ կենդան ի տեղովս եմ մեռած,  
Առանց կրակ է էրուած խորոված:  
Էլ Երբ կը տեսնեմ ես ձեզ ման գալիս,  
Բաղ ու բաղչայում սէյրան անելիս,  
Ինչտեղ ամօթից վարդ էլ է դեղնում,  
Երբ ու բ ձեր կարմիր թշերը տեսնում:  
Բուլբուն էլ վարդից ձեր ձայնը լսելիս:  
Թոշում է, թոշում, ամպերում կորչում  
Եւ իր Ար աշչի աեսածն ասելիս  
Փառք Քեզ զ, Տէր Ասառւած, փառք քեզ է կանչում:  
Հայ ոց աղջիկներ, Բնաշ անուն տամ ձեզ,  
Թէ հրեշտակ ասեմ հրեշտակ չիմ տեսել,  
Թէ մարդ անուանեմ բեղամաղ կանեմ,  
Ու բեմն ինչ անեմ, մոլորուած եմ ես:  
Մոլորուած եմ ես օտար աշխարհում:  
Հաւատն էլ օտար, օտար և լեզուն,  
Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նման,  
Հայոց աղջիկներ, դուք էք աննման:  
Զեր սէրն է միայն սրտումս պահած,  
Զեր սիրով միայն եմ ես կենդանի,  
Զեր սէրը միայն էս կեանքս մաշուած  
Օտարութեան մէջ զեռ կը պահպանի:  
Գերդ Միրիմանեանց:

### ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեանակ, ծիծեռնակ,  
Դու գարնան սիրուն թոշնակ,  
Դէպի ութ, ինձ ասա,  
Թոչում իս այդպէս արագ:

Ա՞խ, թոփր ծիծեռնակ,  
 Ծնած տեղս—Աշտարակ,  
 Անդ շինիք քո բոյնը  
 Հայրենի կտուրի տակ:  
 Անդ հեռու ալեռը  
 Հայր ունիմ սպաւոր,  
 Որ միակ իւր որդուն  
 Սպասում է օրէ օր:  
     Երբ տեսնես գու նորան,  
     Ինձնից շատ բարե արա,  
     Ասա թող նստի լայ  
     Իւր անբախտ որդու վրայ:  
 Դու պատմէ թէ՝ ինչպէս  
 Աստ անտէր ու խեղճ եմ ես,  
 Միշտ լալով, ողբալով՝  
 Կեանքս մաշուել, եղել է կէս  
     Ինձ համար ցերեկը՝  
     Մութ է շրջում արեգը,  
     Գիշերը թաց աչքիս  
     Քունը մօտ չի դալիս:  
 Ասիր, որ չը բացուած՝  
 Թառամեցայ միացած,  
 Ես ծաղիկ գեղեցիկ՝  
 Հայրենի հողից զրկած,  
     Դէս, սիրան ծիծեռնակ,  
     Հեռացիր, թոփր արագ  
     Դէպ 'ի Հայոց երկիրը,  
     Ծնած տեղս—Աշտարակ:  
         Գ. Գողոսիսան:

ՊԱՆԴՈՒԽՏ ԱՌ ԿՐՈՒՆԿՆ

Կոհնւկ, ուստի կուգաս, ծառայ եմ ձայնիդ:

Կոհնւկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունիս,  
 Մի վազեր, երամիդ շուտով կը հասնիս.  
 Կոհնւկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունիս:  
 Թողեր եմ ու եկեր եմ մլքերս ու այգիս,  
 Քանի որ «ախ» կանեմ, կը քաղուի հոգիս.  
 Կոհնւկ, պահ մի կացիր, ձայնիկդ 'ի հոգիս  
 Կոհնւկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունիս:  
 Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ.  
 Զայնիկդ անուշ կու գայ քան զջրի տօլապ-  
     Կոհնւկ, Պաղտատ իջնուս կամ թէ 'ի Հալապ,  
     Կոհնւկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունիս:  
 Սրտերնիս կամեցաւ, եւանք գնացինք,  
 Այս սուտ աստնուորիս դարդերն իմացանք.  
 Սղուհացկեր մարդկանց կարօտ մնացանք.  
 Կոհնւկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունիս:  
 Աստնուորիս բաներն կամաց կամաց է,  
 Միթէ Աստուած լսէ, գոնակն բացցէ,  
     Ղարիպին սիրոն է սուգ, աչերն 'ի լաց է.  
     Կոհնւկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունիս:  
 Աստուած, քեզնէ խնդրեմ մուրվէթ ու քէրէմ.  
 Ղարիպին սիրոն է խոց, ճիկերն է վէրէմ.  
     Կերած հացն է լիզի ու ջուրն է հարում.  
     Կոհնւկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունիս:  
 Ոչ զլուր օրն գիտեմ, ոչ զկիրակին,  
 Զարկած է զիս շամփուրն, բռնած կրակին,  
     Այրիլս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ.  
     Կոհնւկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունիս:  
 Պաղտատու կուգաս, կերթաս 'ի սէնրաթ.  
 Թղթիկ մի գրեր եմ, տամ քեզ ամանաթ.  
     Աստուած թող վկայ լինի քո վրադ.  
     Տարեալ հասուացն զայդ իմ սիրելեաց:  
 Թրեր եմ մէջ թղթիս՝ թէ հոս մնացի,

Օրիկ մը օրեր զաշերս չբացի,  
Սիրելիք, ձեզնէ կարօտ մնացի.  
Կոնւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունիս։  
Աշունն է մօտեցեր, գնալու ևս թէտպիր.  
Երամ ևս ժողովեր հազարներ ու բի՛ր,  
Ինձ պատասխան չտուիր, ելար գնացիր.  
Կոնւնկ, մեր աշխարհէն գնա հեռացիր։  
Վահեցի աիրացու Մկրտիչ։

ԻՏԱԼԱՑԻՑԻ ԱՂՋԿԱՅ ԵՐԳԸ

«Մեր հայրենիք, թշուառ, անտէր,  
Մեր թշնամուց ոտնակոխ,  
Իւր որդիքը արդ կանչում է,  
Հանել իւր վրէժ քէն ու ոխ։  
«Մեր հայրենիք շղթաներով  
Այսքան տարի կապկապած,  
Իւր քաջ որդոց սուրբ արհենով  
Պիտի լինի ազատուած։  
«Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,  
Որ իմ ձեռքով գործեցի,  
Գիշերները ես քուն չեղայ,  
Արտասուրով լուացի։  
«Նայիր նորան, երեք գունով,  
Նուիրական մեր նշան,  
Թռող փողփողի թշնամու գէմ,  
Թռող կործանուի Աւստրիան։  
«Ինչքան կին մարդ, մի թոյլ էտկ։  
Պատերազմի գործերում  
Կարէ օգնել իւր եղբօրը,  
Զանց չարեցի քո սիրուն։

«Ահա իմ դործ, ահա դրօշ,  
Շուտ ձի հեծիր քաջի պէս,  
Գնա փրկել մեր հայրենիք,  
Պատերազմի վառ հանդէս։  
«Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անդամ պիտ' մեռնի,  
Բայց երանի, որ իւր ազգի  
Ազատութեան կը զոհուի։  
«Գնա, եղբայր, Աստուած քեզ յոյս,  
Ազգի սէրը քաջալեր,  
Գնա, թէկ չեմ կարող գալ,  
Բայց իմ հոգին քեզ ընկեր։  
«Գնա մեռիր դու քաջի պէս,  
Թռող չը տհանէ թշնամին  
Քո թիկունքը, թող նա չասէ  
Թէ վատ է իտալացին։  
«Ասաց տուեց օրիորդը  
Իւր եղբօրը մի դըրօշ,  
Մետաքսից էր ազնիւ գործած,  
Ուր երեք գոյն կան որոշ։  
«Եղբայրն առաւ և ողջունեց  
Իւր սիրական քնքուշ քոյր,  
Առաւ զէնքը, սուր, հըրացան,  
Հեծաւ իւր ձին սեաթոյր։  
— Թուրիկ, կանչեց քաջ պատանին,  
— Մնաս բարեաւ, սիրական,  
Այս դրօշակին պիտի նայի  
Ամբողջ բանակ իտալեան։  
Նա սուրբ է ինձ, երբ մկրտուած  
Արտասուրով ու կնքած,  
Դու յանձնեցին ինձ յիշատակ  
Հայրենիքի նուիրուած։

Թէ որ մեռնեմ, դու մի սգար,  
Իմացիր որ տարեցի  
Դէպի մահու արքայութիւն  
Իմ հետ քանի թշնամի։  
Ասաց վազեց դէպի հանդէս  
Աւստրիացոց յանդիման,  
Իւր արիւնով զընել յաւէժ  
Ազատութիւն հոտալիան։  
Ո՞ն իմ սիրուլ կտրատւում է  
Տեսանելով այսպէս սէր,  
Դէպի թշուառ մի հայրենիք,  
Որ ոտնակոխ եղած էր։  
Սորա կէսը, կէսի կէսը  
Գէթ երեէր մեր ազգում.  
Բայց մեր կանայք... ուր եղիշէ,  
Ո՞ւր մեր օտիկնայք փափկասուն։  
Ո՞ն... արտասուք ինձ խեղդում են,  
Այլ չեմ կարող բան խօսել,  
Զէ... թշուառ չէ հոտալիան,  
Եթէ կանայք այսպէս են։

Մ. Նալբանդիան.

### ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒԽՆՔԸ

Մայր Արաքսի ափերով  
Քայլամուր գընում եմ,  
Հին հին դարուց յիշատակ  
Ալեաց մէջը պըտրում եմ.  
Բայց նոքա միշտ յելյեղուկ  
Պղտոր ջրով եղերբին  
Դարիւ դարիւ խփելով  
Փալսչում էին լալագին։

«Արաքս՝ ինչու ձըկանց հետ  
Պար չես բռնում մանկական,  
Դու դեռ ծովը չը հասած՝  
Աըգաւոր ես ինձ նըման։  
«Ինչու արցունք ցայտում են  
Բու սէզ, հըպարտ աչերից,  
Ինչու արագ փախչում ես  
Այդ հարազատ ափերից։  
«Մի պըղտորիլ յատակըդ,  
Հանդարտ հոսէ խայտալով,  
Մանկութիւնը քու կարճէ, —  
Շուտ կը համնիս դէպ ՚ի ծով։  
«Վարդի թըփեր թնդ բըսնին  
Բու հիւրընկալ ափի մօտ,  
Սոխակները նոցա մէջ  
Երգեն մինչե առաւոտ։  
«Մշտագալար ուռիներ,  
Սառ ծոցի մէջ քու ջըրին՝  
Ճըկուն սատըն ու տերե  
Թնդ թաց անեն տապ օրին։  
«Ափերիդ մօտ երգելու  
Հովիք թող գան համտրձակ,  
Գառն ու ուլը քու վըճիտ  
Զուրը մըտնեն միշտ արձակ։»  
«Մէջը ուղցուց Մրաքսը,  
Փըրփուր հանեց իր տակից,  
Ամպի նըման գոսալով  
Այսպէս խօսեց յատակից։  
«Իրզախ անմիտ պատանի,  
Նիւհըս ինչու դարեւր  
Գըրդովում ես, նորոգում  
Իմ ցաւերը բիւրաւոր։

Սիրելի մահից յիս  
 Եղբ ես տեսել, որ այրին  
 Ոտքից գըլուխ պըճընուէ  
 Իր զարդերով թանգագին:  
 «Որի՞ համար զարդարուիմ,  
 Որի՞ աչքը հրապուրեմ,  
 Շատերն՝ ինձ են ատելի,  
 Շատերին՝ ես օտարեմ:  
 «Կար ժամանակ, որ ես էլ  
 Ելքեղազարդ հարսի պէս  
 Հազար ու բիւր պըչրանքով  
 Փախչում էի ափերէս.  
 «Յատակը պարզ ու վըճիտ,  
 Կոհակները ոլորուն,  
 Լուսոբերը մինչև այդ  
 Ջըրիս միջին էր լողում:  
 «Ինչըս մընաց այն օրից,  
 Ո՞ր ջըրամօտ գեղերըս,  
 Ո՞ր իմ շէն քաղաքից,  
 Ո՞ր բերկրալի տեղերըս:  
 «Ճուրքը ջըրի տմին օր  
 Իր սուրբ ծոցէն Արարատ  
 Մայրախընամ ինձ սընունդ  
 Պարգևում է լիտատ:  
 «Բայց ես այն սուրբ ջըրելով,  
 Սուրբ Ակորի աղբիւրին  
 Պիտի ցօղեմ արտօրմյը  
 Իմ ատելի օտարին:  
 «Կամ կհնսատու իմ ջըրով,  
 Ափերիս մօտ կըկըզած  
 Իւր համազը կատարէ  
 Թուրքը կտմ պարսիկը նստած.

«Մինչ իմ որդիք, ով գիտէ,  
 Ծարաւ, նօթի, անտէրունչ  
 Օտար աշխարհ յածում են  
 Թոյլ ոտքերով կիսաշունչ...  
 «Ճեռու, հեռու քշեցին  
 Բնիկ ազգը իմ Հայկեան,  
 Նորա տեղը ինձ տուին  
 Ազգ անկըրօն, մոլեկան.  
 «Դոցմ համար զարդարեմ  
 Իմ հիւրընկալ ափերը.  
 Եւ կամ՝ դոցմ հրապուրեմ  
 Ճըպոտ, պըլշած աչերը:  
 «Քանի որ իմ զաւակունք  
 Այսպէս կու մընան պանդուխտ  
 Ինձ միշտ սըգաւոր կ'տեսնէք,  
 Այս է անխար իմ սուրբ ուխտ:  
 Էլ խօսեց Արաքը,  
 Յորձանք տուեց ահագին,  
 Օդակ-օղակ օձի պէս  
 Առաջ սողաց մոլեգին:  
 Ո. Պատկանեան.

---

ԱՂԹԱՄՄԱՅՐԱՅ ԾՈՎԻ ԵԶԵՐՔԻՆ

Զայն տուր, ով ծովակի, ինչու լուսմ ես.  
 Ողբակից լինել չկամիս դժբաղդիս.  
 Շարժէցէք գեփիւռ ալիքը վէտ վէտ,  
 Խառնեցէք արտասուք այս ջըրիս հետ:  
 Հայաստանի մէջ անցքերին վկայ,  
 Սկզբից մինչ այժմ, խնդրեմ ինձ ասա,  
 Միթէ միշտ այսպէս կը մնայ Հայաստան,  
 Փշալից անապատ երբեմն բուրաստան:

Միջտ միշտ այդպէս ազգը խղճալի  
Կը լինի ծառայ օտար իշխանի,  
Միջտ Աստուծոյ աթոռի մօտին  
Անարժան է Հայն և Հայի որդին:  
Արդեօք գալու է մի օր ժամանակ՝  
Տեսնել Մասիսի գլխին մի զրօշակ,  
Եւ ամեն կողմից պանդուխտ Հայազգիք:  
Դիմեն դէպ իւրեանց սիրնւն հայրենիք:  
Դժուար այդ, միայն, Տեսուչդ վերին,  
Կենդանացրու Հայութեան հոգին,  
Ծագիր նոցա դու քո լոյս դիտութեան,  
Որով իրը էակը նոքա բանական  
Կը ճանաչեն մարդուս կեանքի խորհուրդը,  
Կը լինին գործովք Տիրոջ փառաբան:

Յ. Մելիք-Յակոբեան:

ՊԱՆԴԻՑԻ ԵՐԳԸ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,  
Դու, Հայրենիք, քեզ յիշելով կ'արտասուեմ:  
Զկայ ծնող, չկան որդիք, քոյր, եղբայր,  
Զիք ամուսին, որով ցաւերս մեղմանայ:  
Օտար երկիր, արի, աստղեր և լուսին,  
Թէև պայծառ, ինձի խաւար կը թուի:  
Բնակաբանս՝ տխուր պանդոկ օտարաց,  
Օգս օտար, ջուրս օտար, օտար հաց  
Ո՞ւր է հայրս, մեր է մայրս քաղցրանուն,  
Ո՞ւր զաւակունքս, մւր սիրելիքս սիրասուն:  
Սակայն ունիմ քովս Յիսուս, փրկէ զիս:  
Նա օտար չէ, նա իմս է, սիրէ զիս:

ԱՆԻ ՔԱՂԱՔ

Անի քաղաք նստեր՝ կուլայ,  
Չը կայ ըսող՝ մի լա, մի լա.  
Կ'ըսես քիչ է, թող մնայ՝ լայ.  
Ա՛լ երբ լսեմ՝ մի լա, մի լա,  
Շատ ցաւերով կ'այրիմ, տապիմ,  
Չոնիմ մէկ մարդ հաւատարիմ,  
Որ խղճալոյս կայ՝ մօտենայ,  
Հէջ չէ ըսէ՝ մի լա, մի լա:  
Ա՛լ Հայութայ, խղճա՝ ինձի,  
Տես թէ քո Անին ի՞նչպէս է,  
Հերիք ես լամ, դու չըգիտաս.  
Զէ բո Անին ափսոս է,  
Ախ ու վախով օրերս անցաւ,  
Լալէն աչքերս կուրացաւ,  
Որբ մնալն ինձ վիճակեցաւ,  
Բաղդս ընաւ զիս մոռացաւ,  
Կարուսեր եմ թագաւորներ,  
Ժողովեր եմ գլխուս քօռ բուեր,  
Որք միշտ կ'հրգեն՝ «Անին անցաւ,  
Անին անտէը աւելեցաւ»:  
Եկար, տեսար, դարձեր՝ կ'երթաս.  
Լալով կըսեն՝ «բարեալ մնաւ»,  
Աստուած միրես՝ չ'ըմոռանաս,  
Մասիս սարին երբ մօտենաս,  
Հսէ իմ քաջ Արարատին՝  
«Նստէր՝ կուլայ քո խեղճ Անին,  
Կ'ըսէ, երբ աւետիք կըտաս,  
Թէ՝ «իմ Անի, հերիք է լաս»:

Աղ. Վ. Արարատեան:



ԶԵՆԵՐՉԱՆԻԿ

Ո՞ր մահկանացուն այս երկրի վրայ  
երջանիկ ժամեր վայելել կրնայ,  
եւ ո՞րն է այդ վարդ ծլած աշխարհիս,  
Որ ձեռացըդ մէջ իսկոյն չթոռմի:  
Չեն, չեն երջանիկ, ո՞հ, ժամ սիրանուէր,  
Որ գգուէ հովիկ զկուսին մաղեր:  
Թէ մտօք գրկես զերկիր և զերկին,  
Եւ ամեն գաղտնիք քեզ մերկանային,  
Անհար է քեզ ըլլալ երջանիկ,  
Այլ դշիմ բաղդին թշուառ խաղալիք:  
Չեն, չեն երջանիկ... և այլն:  
Ի զուր գիւցազունք պատերազմական  
Դաշտերու վրայ կանգնեցին նշան.  
Հաղիւ ըստացան յաղթութեան պսակ,  
Կորդեց ձեռքերնէս զայն մահու հրեշտակ:  
Ո՞հ, չէք երջանիկ, ո՞հ, դժբաղդ Հայեր,  
Մինչդեռ Հայրենիք չէք միսիթարեր:  
Մ. Պէտիկթաշլեան:

ԳԱՐՈՒՆ

Ո՞հ, ինչ անուշ և ինչպէս զով  
Առաւօտուց փչես հովիկ,  
Ծաղկանց վրայ զուրգուրալով  
Եւ մազերուն կուսին փափկիկ.  
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,  
Գնա՛, անցիր սրտէս 'ի բաց:  
Ո՞հ, լինչ աղու և սրտագին  
Ծառոց մէջէն երգես, թոչնիկ,

Սիրոյ ժամերն 'ի յանտառին  
Լզմայլեցան 'ի քո ձայնիկ.

Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,  
Գնա՛, երգէ սրտէս 'ի բաց:  
Ո՞հ, ինչ մրմունջ հանես, վտակ  
Ականակիտ և հանդարտիկ,  
Քու հայելւոյդ մէջ անապակ  
Նային զիրենք վարդն ու աղջիկ.  
Բայց չես վտակ իմ հայրենեաց,  
Գնա՛ հոսէ սրտէս 'ի բաց:  
Թէպէտ թոչնիկն ու հովել Հայոց  
Աւերակաց շրջին վրայ,  
Թէպէտ պղտոր վտակն Հայոց  
Նոճիներու մէջ կը սողայ,  
Նոքա հառա՛չք են հայրենեաց  
Նոքա չերթան սրտէս 'ի բաց:  
Մ. Պէտիկթաշլեան:

ԵՐԳ ՑԱՀԱԼԳԻՆ

Իմ սիրելի զաւակունքս  
Կը թափառին օտար աշխարհ,  
Ես ուր գիմեմ, մւր փնտում,  
Կը ծառային այլոց խոնարհ,  
Եկայք, որդեակը իմ,  
Զեր մօրն այցելութեան:  
Դարեր անցան, լուր մը չ'առի,  
Իմ քաջերս մեռան, կորան.  
Կուլամ, արիւնս կը սառի,  
Մէկը չունիմ՝ տայ ինձ դարման,  
Եկայք, որդեակ... և այլն:

Արիւնս ցամքած, սիրտս մաշած,  
Դէմքս է տխուր մինչ' յաւիտեան,  
Եւ կարօտոյն իմ որդեկաց  
Պիտի իջնեմ սև գերեզման:  
Եկայք, որդեակք... և այլն:  
Եւ գնւ, հովիւ թափառական,  
Կ'երգես ախուր 'ի մէջ հովտաց.  
Եկ արտասուենք թանկ կորստեան  
Տխուր մահուսն մեր որդեկաց:  
Եկայք, որդեակք... և այլն:  
Իսկ դու, կոռնկնկ իմ հայրենեաց,  
Գնա հեռնեւ աչքէս 'ի բաց,  
Յետին ողջոյնս տար զաւակացս,  
Զի կեանքիս մէջ յոյսս է մեռած:  
Եկայք, որդեակք.. և այլն:

'Ի ՇԱՀԱՐՇԱՆ ԴԱՇՏԻՆ ՎՐԷԺՔ

Բամբ... Որոտան բարձուստ ըոմբիւնք Այրարա-  
տեան դաշտն ի վայր  
Արի արանց արիւնքն յեռանդն առատանան  
'ի հրազայր:  
Հրաւէրք հայրենեաց հոչակի ընդհանուր,  
Հոգիք Հայկազանց ըորրոքին 'ի հուր,  
Որք Երկնաւորի պսակին էք կարօտ,  
Որք երկնաւորին փառաց երկնայորդ:  
Հապճն, արի արանց մանկունք,  
Հայրենալրէծք Հայկազունք.  
Հապճն 'ի զէն զունդ 'ի զունդ,  
Յեռեալ 'ի պար թունդ 'ի թունդ.  
'ի զէն, 'ի վրէժ, օն անդր, յառաջ,

'ի զէն, 'ի վրէժ, մի ձախ մի յաջ.  
Օ՞ն անդր յառաջ, յառաջ, յառաջ,  
Հապճն յառաջ:  
Հ. Դ. Ալիշան:

Հ Ա Խ Ս Ի Ն

Լոեց: Ամպերն եկան ծածկեցին  
Երկինքն, ու լուսինն աչքէս խլեցին.  
Մնացի մենակ, հոգիս վրդոված,  
Զեռներս ծոցիս, վլուխս քարշ արած:  
Եւ այնուհետև ամեն իրիկուն  
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն.  
Նորա տիրամած գէմքը նայելիս՝  
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս:  
Աշխ, ցոլա-փայլէ, տիրադէմ լուսին,  
Գուցէ քո փայլից փայլ տաս և հային.  
Պատմէ շատերուն վարդանի մահը,  
Կամ ինչպէս կորաւ Հայ ազգի զահը,  
Կամ ինչ վեհ սիրով սիրում էր Վարդան  
Մայրենի հողը՝ աշխարհ Հայաստան:

Գամառ—Քաթիսա:

Հ Ա Յ Ո Յ Գ Ի Ն Ի

Բաժակներ առնունք, եղբարք,  
Լիք լիք բաժակներ գինով.  
Կարմիր ու ձերմակ գինին  
Մեղ լինի անուշ համով:

Բերաններու տանենք անվախ,  
Զէ դա խառնած կամ խարդախ-  
Նեկտար է և ոչ դինի,  
Խմենք՝ մեղ անուշ լինի,  
Արաքսայ ջրով ցօղած,  
Հայոց արեով հասած,  
Հայոց աղջիկն է քաղել,  
Քնքոյշ ձեռներով քամել,  
Այս բերքն է Հայոց երկրէն,  
Հայաստան տնկած նոյէն,  
Անմահ երկնային գինին  
Նա խմեց, երբ իջաւ սարէն,  
Այս անուշ դինին խմողը  
Սրտէն թող հանէ ոխը.  
Ամենքս էլ ասենք ամեն,  
Որ մեզի շատ տայ ամ ին:

Ռ. Պատկանեան:

### ՊԼՊՈՒԼՆ ԱՀԱՐՄԱՑՐԻ

Ո՞վ դու բարեկամ այրած սրտերու,  
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,  
Երգէ, պլպուլիկդ, երգէ 'ի սարէդ,  
Զանմահ քաջքն Հայոց երգէ հոգոյս հետ:  
Թադէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,  
Սրտիկս՝ որ 'ի խաչն էր կիպ' թունդ առաւ.  
'ի խաչին թեէն թուայ ու հասայ,  
Գտայ զքեզ 'ի դաշտ քաջին Վարդանայ:  
Պլպուլ, բեղ համար մեր հարքն ասացին,  
Թէ չէ հաւ՝ պլպուլ մեր Սւարայրին  
Եղիշեայ հոգեակն է քաղցրազրուցիկ,  
Որ զ Վարդան 'ի վարդն տեսնու կարմրիկ:

Զմեոն յանապատ կուգնայ կայ 'ի լաց,  
Յ Արտազ գայ գարունն 'ի թուփ վարդենեաց,  
Երգել ու կանչել յԵղիշէին ձայն,  
Թէ պատասխանիկ մ' արդեօք տայ Վարդան:  
Հ. Ղ. Ալիշան:

### ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՒՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի էլ լոենք, եղբարք, հիմի էլ  
Երբ մեր թշնամին իւր սուրն է դրել,  
Իւր օրհասական սուրը մեր կրծին,  
Ականջ չի դնում մեր լաց ու կոծին:  
Ասացէք, եղբարք հայեր, Բնչ անենք,  
Հիմի էլ լոենք,  
Հիմի էլ լոենք, երբ մեր թշնամին  
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,  
Զնջեց աշխարքից Հայկայ անունը,  
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,  
Խլեց մեղանից թագ, և' խօսք, և' զէնք,  
Հիմի էլ լոենք,  
Հիմի էլ լոենք սուրքից մեր թշնամին  
Խլեց մեր սուրը՝ պաշտպան մեր անձին,  
Մշակի ձեռքիցն էլ խոփը խլեց,  
Այդ սուր ու խոփից մեր շղթան կուց.  
Վայ մեղ, շղթայով կապած գերի ենք,  
Հիմի էլ լոենք:  
Հիմի էլ լոենք, երբ մեր թշնամին  
Սոսկակի զէնքը բռնած մեր գլխին՝  
Կուլ տալ է տալիս արտասունք առատ,  
Աղէխարշ բողոք վարուց ապիրատ.  
Մեր գլուխը լալու Եփրատ ուր պտղենք,  
Հիմի էլ լոենք:

Հիմք էլ լոհնք, երբ մեր թշնամին  
Կիրք գոռոզութեամբ լցոած իւր հոգին,  
Արդարութեան ձայնն հանած իւր սրտից,  
Սրտաքսում է մեզ մեր բնիկ երկրից.  
Պանդուխտ հալածհալ, եղբարք, ուր դիմենք.

Հիմք էլ լոհնք, երբ մեր թշնամին,  
Անհոգ մեր բերած ծանը զոհերին,  
Իւր լիրը, նղոված ձեռքը կարկառեց,  
Ազգայնութեանն վերջին կապը պատառեց  
Հայի կորուստը մօտ է, ինչ անենք.

Հիմք էլ լոհնք, երբ մեր թշնամին,  
Արհամարհելով մեր փառքն ազգային,  
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,  
Գառնազգեստ գայլին մեզ գլուխ դրաւ.  
Սուրբ խորան չունինք, արդ ուր աղօթենք.

Հիմք էլ լոհնք, մարդիկ ինչ կասեն,  
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,  
~~Չ~~ամ ամիս ո՞ր հայք արժանի էին  
Այդ սուրկական անարդ զիճակին.  
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը զիտենք.

Մինչ երբ լոհնք,  
Թող լոէ մունջը, անդամալոյժը,  
Կամ որոց քաղցը է թշնամու լուծը,  
Բայց մենք, որ ունինք հոգի և սիրտ քաջ,  
Եկ անվախ ենինք թշնամու առաջ,  
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք.

Ու այնպէս լոհնք:  
Ո. Պատկանահան:

### ՏԱԼՈՒՐԻԿՑԻ ԿՏՐԻՁԸ

Տալուրիկցի կտրիձ եմ դորթ,  
Քաղքցու պէս չեմ թուլամորթ,  
Սարի զաւակ, քարի որդի,  
Հին քաջ հայոց եմ մնացորդ:  
Տալուրիկցի զաւակ եմ քաջ,  
Չեմ խոնարհիր թուրքի առաջ,  
Քալոտ լերանց եմ ազատ լաճ,  
Չեմ տեսոր ոչ արօր, ոչ մաճ:  
Հայ աղպրտիք, վայ աղպրտիք,  
Տալուրիկցի զաւակ եմ քաջ,  
Պատութեան սիրոյն համար  
Եկէք քէպ ինձ առաջ, առաջ:

Երբ որ բացի աչքս այս աշխարհ  
Ազատ տեսայ մեր սար ու քար,  
Մինչև փակեմ աչքս՝ ի խաւար,  
Պիտ' չկոխէ հոս ոտք օտար:  
Իմ պատպ ծնաւ զիս պալու ծոց,  
Ինձ ընկոյզ կոճղ մ'եղաւ օրօրոց,  
Տկող ծնայ, մեծցայ տկող:  
Եկմ արեւ, սաստիկ էսպանց:

Հայ աղպրտիք... և այլն:

Ոտքս բորիկ կուրծքս միշտ բաց,  
Ի՞նչ փոյթ' թէ քոյրս ալ մերկ մնաց,  
Ինձ մօտ մէկ է արհ, բուք, ցուրտ,  
Բաւ է չիշինը վրաս թուրք, Քուրտ:  
Յորենի տեղ կուտեմ կորիկ,  
Երկաթ ծեծեմ զիշերցորեկ,  
Շինհմ փէտատ, խոփ, խաճրկաթ,  
Ծանր է դատումս, բաց եմ ազատ:  
Հայ աղպրտիք... և այլն:

Հարստութիւն, ուսում, անձար,  
 Պատիւ և փառք չեն ինձ հաճար,  
 Բաւ է՝ ունիմ ճաք, թուր, խանճար,  
 Բաւ է՝ չ'իխշեր վրաս օտար:  
 Զէնքս է միտկ իմ խաղալիք,  
 Կ'ատեմ հանդարտ կեանք խաղաղիկ,  
 Կը սիրեմ որս, կոիւ, աւար,  
 Կը սպանեմ, երբ ընկնի հաւար:  
 Հայ աղպրտիք... և այլն:  
 Գիշեր զէնքս վրաս քնեմ,  
 Երազիս մէջ կըոիւ կ'ընիմ,  
 Կոռւելն ինձ մօտ խաղալ է,  
 Կոռւով մեռնելն ինձ հալալ է:  
 Կոռւի մէջը մեռաւ իմ պապ,  
 Այդ կերպ մահն է անուշ մրափ,  
 Ես ալ կուզեմ մահ մէջ կոռւի,  
 Որ իմ անուն անմահ գրուի:  
 Հայ աղպրտիք... և այլն:  
 Սյս սարերը անմատչելի  
 Իմ քաջ նախնիք երբ ընարեցին,  
 Հսկն՝ «Ազատ որդոց որդի  
 Քաջաց սերունդ թող հոս ապրի»:  
 Եւ իմ խելօք ջոջ պապ Յարէ,  
 Կստուած հոգին լուսաւորէ,  
 Ինձ կ'ըսէր միշտ, «Ազատ ապրիր,  
 Մի ծոեր վիզ, հարկ մի վճարիր»:  
 Հայ աղպրտիք... և այլն:  
 Տալուորիկն է սեսս սարեր,  
 Խոր, մութ ծործորք, սեպ, սեպ քարեր,  
 Վերեկ ջուխտակ ծեր Մարաթուն.  
 Հոգիս մատաղ մեր Մարտթան:  
 Մեղմով պարծի այսօր Սասուն,

Մենք ենք խրախոյս հայոց նկուն,  
 Տալուորիկ սար, ժայռոտ Զեյթուն  
 Տան իբարու ազատ ողջոյն:  
 Հայ աղպրտիք... և այլն

Մ. Տամատեան:

### ԱՂԱՍՈՒ ԵՐԳԸ

Մար ու ձոր ընկած, մէկ չոր թփի տակի,  
 Դետին նայելով՝ մնացել եմ նստած,  
 Չեսս ծոցում՝ գլուխս մէկ լեռ քարի  
 Տուած լալիս եմ, օրս խաւարած:  
 Ամպերն առաջիս, սարերն ետեիս,  
 Քեզ մտիկ տալով, այ իմ քաղցր Մասիս,  
 Աղի արտասընքով էրուած-խորոված,  
 Երեսիդ նայիմ՝ մնամ քարացած:  
 Ծնող, ազգականք հեռու ինձանից,  
 Լուսնին նայելով ձեր սէրն յիշելով,  
 Երանք, երբ կըլի, որ ես ձեզանից  
 Իմ կարօտս անսիմ՝ ձեզ ջան ասելով...:  
 Նաղլու, իմ նալլաւ, աննման նաղլու,  
 Սիրտս խորովի անունդ յիշելով.  
 Նաղլու, իմ նաղլու, հրաշալի նաղլու,  
 Աղասին քեզ տայ իր ետին բարով:  
 Մարերի դոշին, ձորերի միջին  
 Հայ գլխին տալով քու խեղճ Աղասին,  
 Երեսիցդ զրկուած, քո սիրով մաշուած,  
 Տատրակի նման փշի վրայ նստած...  
 Քեզ եմ մնում, քեզ, քո ջանին մեռնիմ,  
 Հող ու գերեզման ես վրէս ունիմ,  
 Բանց իմ սառն մարմինը, էլ ի՞նչ գերեզման  
 Ինձ պէտք կըգայ, եթեսիդ դուզբան:  
 Խ. Արովեան:

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹՅԵԱՆ

Ազատն Աստուած այն օրից,  
Երբ հաճեցաւ շունչ փշել  
Իմ հողանիւթ շինուածքին՝  
Կենդանութիւն պարզեցել,  
Ես՝ անբարբառ մի մանուկ՝  
Երկու ձեռքս պարզեցի  
Եւ իմ անզօր թևերովս  
«Ազատութիւն» գրկեցի:  
Մինչ գիշերը անհանգիստ  
Օրորոցում կապկապած.  
Լալիս էի անդադար՝  
Մօրս քունը խանգարած,  
Խնդրում էի նորանից  
Բազուկներս արձակել,  
Ես այն օրից ուխտեցի  
«Ազատութիւնը» սիրել:  
Թոթով լեզուիս մինչ կապերը  
Արձակուեցան բացուեցան,  
Մինչ ծնողքս իմ ձայնից  
Խնդացին ու բերկրեցան,  
Նախկին խօսքն որ ասացի,  
Չէր «Հայր» կամ «Մայր», կամ այլ ինչ՝  
«Ազատութիւն» դուրս թռաւ.  
Իմ մանկական բերանից:  
« ասութիւն—, ինձ կրկնեց  
Ճակատագիրը զերեցից,—  
Ազատութեան դու զինուոր  
Կամիս զրուիլ այս օրից.  
Ո՞հ, փշոտ է ճանապարհոյ,  
Քեզ շատ փորձանք կը սովասէ,

Ազատութիւն սիրողին  
Այս աշխարհս խիստ նեղ է:  
«Ազատութիւն—, գոչեցի,—  
Թող որոտայ իմ զլիսին  
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,  
Թող դաւ դնէ թշնամին.  
Ես մինչ՝ մահ, կախաղան,  
Մինչև անարդ մահու սիւն  
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ  
Անդադար «Ազատութիւն»:  
Մ. Նալբանդեան:

ԻՆՉ ՀԱԱՄԱՐ ԶԷ ...

Ինձ համար չէ գարնան գալը,  
Ինձ համար չէ ծառի ծաղկելը,  
Ուրախութեան սրտի գրգիռը,  
Ոչ մի բերկրանք չէ ինձ համար,  
Ինձ համար չէ կենաց բաղդը,  
Ինձ համար չէ հրջանկութիւնը  
Եւ մրայօն կուսի աշքերը,  
Նոցա արցունք չեն ինձ համար,  
Ինձ համար չէ փայլուն լուսնի  
Անտառ ու սուր լուսաւորելը,  
Գարնան վարդի երգչի տաղերը,  
Սոխակ ու վարդ չեն ինձ համար:  
Ինձ համար չէ բարեկամաց  
Մէկտեղ սիրով տօն կատարելը,  
Զատիկ օրուայ ուրախ ասելը  
«Քրիստոս յարհաւ» չէ ինձ համար:  
Ինձ համար չէ ծնողաց լացը,  
Ինձ համար չէ աղջկայ տիրելը,

Թերեզմանիս վրայ արտասուիլը.  
Բարեկամաց՝ չէ ինձ համար.

Բայց ինձ համար կուգա, ժամը,  
Կերթամ թշնամիաց պատերազմը,  
Եւ մահառիթ սպանիչ գնդակը  
Անդ պատրաստած է ինձ համար:

Ք. Պատկանեան:

### ԿԻՆԱՑ ԲԱԺԱԿ

Եղբարք, մի շուրջ ժողովեցէք,  
Քաջ հայոց կերպիւ կոնծեցէք,  
Բաժակները դարդակեցէք  
Մեր Հայ ազգի կենացը:  
Հայոց երիտասարդներուն,  
Հայրենիք պաշտպանողներուն,  
Որոց անկումն էլ սուրբ է մեզ  
Այս բաժակը նուիրենք:  
Հայ աղջիկներու կենացը,  
Որք միայն հայ մարդ կու սիրեն,  
Միշտ իրանց մաքուր կու պահեն.  
Այս բաժակը դարդակենք:  
Արանց, որ մեր սիրտը գրաւում են,  
Մեզ զգօն ճամբով վարում են.  
Որոց կեանքը մեզ օրինակ,  
Մի երրեակ վկեցցէ՝ անենք:  
Եղբարց, որք այժմ աւարտին են,  
Մեր ուխտի անդամ եղել են,  
Որոց ուխտը միշտ սիրում է,  
Այս բաժակը նուիրենք:  
Եղբարց, որք դարդից ազատ են,  
Մահուան հանդիսա վայելում են,  
«Ողորմի հոգուն» անելով  
Այս բաժակը նուիրենք:

Բայց որ դեռ գինին փայլում է,  
Ու մեզ իրան մօտ կանչում է,  
Բաժակները դարդակեցէք  
Ազատութեան կենացը:

Գերմ. Ք. Պատկանեան:

### ԶԵՅԹՈՒԻՆ

Զէյթուն, անկախ գու աշխարհիկ,  
Քո սար ու ձոր են անառիկ,  
Ամեն մի քար և անկիւնդ,  
Շաղախել է քո արիւնդ:  
Հէլէ, հէլէ, հէլէ, հէլէ, հէլէ,  
Դեռ ևս քո զօրեղ բազկում,  
Ռուբինեանց երկիրն է շարժուում,  
Ցիշատակ նախնի դիւցազանց,  
Պատկերն է քո քաջ զաւակաց,  
Հէլէ, հէլէ . . .  
Մզրախն է ունեցած կայքդ,  
Քո ապրուստն է և քո կայքն,  
Բոնութեան լուծը թուրք մարդու,  
Էդ զէնքով ևս թօթափել դու:  
Հէլէ, հէլէ . . .  
Կէցցէ Գրիգորեան հաւատը,  
Հայ աղանել է իր ժողովուրդը,  
Ոչ մի կրօն աշխարհիս վըայ,  
Զունի ազատ ոդին սորբաւ:  
Հէլէ, հէլէ . . .

ՀԱՅՐԵՆԻՔ. ԱՐԲԱՋԱՆ  
Հայրենիք սրբադան, իմ սիրում աշխարհ,  
Թուչում եմ դէպի քեզ հոգւովս անդադար:

Բայց աւաղ, այս բանտում փակուած եմ անտես,  
Պատերազմի դաշտում չեմ կուռում և ես:  
Հանապաղ տանջուեցայ քո ճակատագրով,  
Սրտում շղթաների ձայներ կրելով,...  
Չեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,  
Ա՞խ, կամ ոչնչանալ, կամ լինիլ աղատ:  
Քաջ ընկերներովս հեշտ է ինձ կոռւել,  
Եւ սուրբ գործի համար քաղցր է մեռանել,  
Բայց, աւաղ, այս բանտում փակուած եմ անտես  
Պատերազմի դաշտում չեմ կուռում և ես:  
Զգիտեմ, ինչպէս է կոին հրգեհւում,  
Ես չունիմ ոչինչ լուր՝ բայց լուրն է թաշում...  
Տարւում է միշտ համբաւ սպանութեան ահեղ  
Թափում է ազգարիւն, բայց ես չեմ այնտեղ:  
Ա՞խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,  
Եւ վառ արշալոյսով քո օրը կարմրում է...  
Թ'ող այս տեղ չարչարուեմ անծանօթ կապուած,  
Միայն քեզ, հայրենիք, տեսնեմ ազատուած:

3. Քուչուքկեան

Յ Ո Յ Ս

Թող փչէ քամին պաղ պաղ երեսիս,  
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող գայ  
Ո՛րքան որ կուզէ՝ թող փչէ հիւսիս,  
Յուսով եմ, վաղուց գարունը պիտի գայ:  
Թուխպը թող պատէ երկինքը պայծառ,  
Թանձր մառախուղ երկիր թող փակէ,  
Տարերք աշխարհիս խառնուին իրար,  
Յուսով եմ, վաղուց արև պիտ, ծագէ:  
Թ'ող գայ փորձութիւն, թ'ող գայ հալածանք,  
Խաւար թող գառնայ անաղօտ լոյսը,

Ապրաւափելի չեն հային տառապանք  
Միայն... չը հատնէր խղճուկի յոյսը:  
Գամառ-Քաթիպա:

\* \*

Ննջեա, Վարդան անուշ քնով

Օրօր կասեմ ու նանի,

Քնոյ հրեշտակ իւր թեկրով.

Քո երեսին հով անի:

Ննջեա, ննջեա անուշ զաւակ,

Շուտ մեծացիր ու մարդ դառ,

Հայրենիքիդ լեր պիտանի,

Նորա արեան վրէժն առ:

Դիտես արգեօք սվ էր պապդ

Եւ ինչ գործեր նա արաւ,

Նա վարդանն էր, որ իւր գործով

Հայրենիքին փառք բերաւ,

Քո անունն էլ նոյնպէս Վարդան,

Քաջ վարդանին նմանիր,

Նորա տուած օրինակով,

Հայրենիքիդ ծառայիր:

Դիտացիր որ ամենայն մարդ

Պարտական է իւր ազգին

Սիրել, օգնել թէ որ պէտք է,

Հայրենիքին զոհ լինել:

Դէս, մեծացիր ու քաջացիր,

Ազգիդ վրայ մտածիր,

Զեռքէդ եկած ամեն բարիք

Նորա համար մի խնայիր...

Կ. Մամիկոնեան

Ա Լ Ա Դ Ե Ա Զ

Սև մութ ամպիր ճակտիդ դիզուան  
Դուման հագար, Ալագեազ,  
Սըրտումս արև հէջ չի ծագում,  
Միրտս էլ դուման, Ալագեազ:  
Չառ փէշիրդ անցայ, տեսայ,  
Առանց դարդի մարդ չըկայ,  
Է՛ն, իմ դարդն, ջան Ալագեազ,  
Իմ դարդս որ ձերն եղնէր  
Է՛յ, Մանտաշի մարմանդ հովեր,  
Իմ դարդս որ ձերն եղնէր  
Չեր նուշ-անուշ ծաղկանց հոտը  
Թոյնի, տօթի կը փոխուէր:  
Է՛յ, Մանտաշի նախշուն հաւքեր,  
Իմ դարդս որ ձերն եղնէր  
Զեր էդ զառվառ, խաս փետուրներ  
Կը սևնային քանց գիշեր:  
Է՛յ, վախ կոտրան իմ թևերս,  
Ընկայ գիլկըդ, Ալագեազ,  
Ախ, մեծ սրտիդ սղմեմ սիրտս,  
Լամ, արուն լամ, Ալագեազ:

Բ Լ Բ Ո Ւ Լ

Գնա բլբուլ մեր աշխարհից  
Էլ դու այստեղ մի երգիր  
Մեր օրը սև, մեր կեանքը ցաւ,  
Էլ այս երկրում մի երգիր  
Տանջուած սիրտը անուշիկ երգից  
Քրքրւում է խորանում.  
Սըրտի վիշտը քո երգերից  
Փրփրում է լիռնանում:

Գնա բլբուլ մեր աշխարհից,  
Գնա երգիր այլ երկրում,  
Ասա այստեղ, որ մեր վարդից  
Արեան թարմ հոտ է բուրում:  
Որ ողբաձայն մրմնջացող  
Վտակների հոսանքներ  
Միանում են, արեան շիթեր  
Առաջ շարժւում մոլեգին,  
Որ ծաղկագարդ հովիտներից  
Մահուան ցուրտ հոտ է փըչում,  
Որ մեր երկրում կանաչ գաշտերն  
Հսկոյն կարմիր են ներկւում:  
Գնա պատմիր, որ դու տեսար  
Այշիացած մի երկիր,  
Սարեր, ձորեր կարմիր հագած  
Արիւնազարդ մի երկիր:  
Ա՛խ, ջան բլբուլ էլ մի կանգնից  
Գնա, պատմիր աշխարհին  
Մեր ցաւ ու հոգմ, վիշտն ու թախիծ,  
Մեր օրերը դառնագին...  
Ժիբայը

Ս Գ Ա Լ Ի Ւ Մ Ա Հ

Դու զնվ խնդրես, մայր իմ անուշ,  
Ե՛կ, մի դողար, մօտեցիր հոս,  
Անլաց աչօք դիտէ զորդիդ  
Ու իւր վէրքերն արիւնահոս:  
Թուքքաց մայրեր թնդ լան՝ ու դուն  
Ուբախ լուբեթ տաք ՚ի Զէյթուն:  
Խնչպէս երբեմն որրանիս մէջ  
Կակուղ ձեռամբ փայլիայելով  
Մանկիկ մարմնոյս հանդիստ տայիր:

Իբրև հրեշտակ նուագելով:

Զիս հանգչեցուք ՚ի հող ու դուն ուրախ... և այն:  
և նորեկ որդւոյս կենացն արե  
Զեզի համար փայլի, հայեր»,  
Այսպէս յանժամ դու կ'երգէիր  
Օրօրոցիս նստեալ քովեր:

Անոնց համար շիջաւ՝ ու դուն ուրախ... և այն:

Կարմիր կայլակը ցայտին վէրքէս,  
Սակայն, մայր իս, նայէ չորս դին՝  
Զառիւնըուշտ քիւրտերն տես  
Հազարներով փոռուած գետին.

Կերաւ զանոնք սուր մեր՝ ու դուն ուրախ... և այն:  
ինչպէս վիշտապ մըռընչելով  
Յանկարծ մեր վրայ յարձակեցան,  
Ծընցեց Զէյթուն վլուխն ժայռոտ  
Իւր վիճից մէջ թօթափեցան:

Կարմիր ներկան ձորք մեր՝ ու դուն ուրախ... և այն:  
Ու ծափ զարկին մեր հարց ըստուէրք,  
Զի չէ մեռած հայոցն կըրակ,  
Ու ցնծացին այնչափ զոհեր,

Զի լուծաւ վրէժ յարեան վըտակ:

Թնդայ Մասիս, մայր իմ և դուն ուրախ... և այն:  
Վերջին համբոյր տամ քեզ, մայրիկ,  
Հատուցնեն զայն սիրոււնյա.  
Վերջին անգամ գրկեմ մեր հող,  
Ոյր արդ կիշնեմ ՚ի ծոյն անլոյս:

Խաչ մը տնկէ վրաս՝ ու դուն ուրախ... և այն:

Մ. Գէշիկթաշլեան

### ԳՐԻՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱԲԱՐԺՎ եկար սիրուն կուսնկ,  
Ի՞նչ լուր բերե՛ հայրենիքէս,

Խոսիր ինձ հետ ազատօրէն.

Կեանքն կընուիրեմ ես քեզ:

Տեսան իմ հայրենեաց տունը,  
Գեղեցիկ, զարդարուած դոյնը,  
Նրա սիրուն տանջւում եմ,  
Աշքերիցս կտրաւ քունը:

Ազատ տեսար մեր լիոները,  
Հայորդեցի՞ր դու իմ սէրը,  
Այս լիոներու պաշտպանողը  
Արծուի կորիւն նետերը:

Տեսան մեր փոքրիկ քուրաստան՝  
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան՝  
Եղեմական դրախտավայր,  
Նա կոչւում է Հայաստան:  
— Այստեղ ունիս եղբայր ու քոյր,  
Մինչ այժմ Բնչ կը սպասես ՚ի զուր,  
Արի առնեմ իմ թևերուն,  
Գընանք այնտեղ, ուրախացներ?...

\* \* \*

Է՛ն, ջան հայրենիք, ինչքան սիրուն ես,  
Սարերդ կորած երկնի մովի մէջ,  
Զրերդ անուշ, հովերդ անուշ,  
Միայն բալերդ արիւն ծովի մէջ...  
Քու հողին մեռնեմ, անգին հայրենիք,  
Ա՛խ, քիչ է թէ որ մի կեանքով մեռնեմ,  
Երնեկ ունենամ հազար ու մի կեանք,  
Հազարն էլ սրաւաց քեզ մատաղ անեմ,  
Ու հազար կեանքով քուդաբդին մեռնեմ  
Բալէքիդ մատաղ, մատաղ քո սիրուն,  
Մենակ մի կիանքը թող ինձի պահեմ,  
Էն էլ քու փառքի գովքը երգելուն.  
Որ արտուածի պէս վէր ու վեր ճախրեմ

Նոր օրուայ ծէգիդ, ազիզ հայրենիք,  
Ու անուշ երկեմ, բարձր ու զիլ գովեմ  
Կանաչ արևի, ազատ հայրենիք:

**Պ Ա. Ռ Զ Գ Ի Շ Ե Բ**

Մի գեղեցիկ պարզ գիշեր էր,  
Երկինքը լի աստղերով  
Եւ լուսինը մեղմ փայլում էր  
Կաթնանման իւր լուսով:  
Նա նայում էր լորիկ մնջիկ,  
Խնչպէս մի կոյս դէպի Վան,  
Նորա աչքին երեռում էր  
Բիւր ցաւալի տեսարան:  
Նա տեսնում էր անթիւ ըրդեր,  
Առած սուր, թուր, հրացան,  
Կոտորում են, կողոպտում են,  
Աւերում են անտէր Վան,  
Եւ կարծես թէ երկնքիցը  
Ասում էր այդ լուս վկան,  
Վրայ հասիր հայ ազգասէր,  
Զեռքից գլնաց Հայաստան:

**ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՂՆԵԱՆ**

Վարդան.—Ո՛վ Հայկազունք, ով դիւցազունք  
Ահա ձեզ նոր հանդիսարան.  
Բացէք զաշերս հերիք ննչէք  
Տացիք դարեր են անցկացան.  
Զօր. Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք  
Մեր կեանքը զոհ բոլորանուէր  
Մատաղ անել Հայոց ազգին,  
Նորա լեզուին և կըրօնին:

Վարդան.—Առէք սուսեր, նետ ու աղեղ,

Ելէք ընդդէմ ձեր թըշնամեաց,

Ձեր հաւատը և ձեր ազգը,

Պաշտպանեցէք յօտար ազգաց:

Զօրականք.—Հայ զինուորի կեանքը դառն է,  
Երբ նա պարապ տանն նստած է,

Մեղ ասպարէզ անմահ փառաց

Կոռի դաշտն է նշանակուծ,

Վարդան.—Հայ զօրականք, ձեր նետերը  
Կապարձից մէջ հերիք մնան.

Ձեր երկիրը Պարսից ուժից

Ընդէր լինին այսպէս կոխան:

Զօր. Մենք պատրաստ ենք, մենքուխտել ենք  
Մեր սուրբ երկրից հալածական

Առնել անկրօն Պարսից ազգը,

Փրկչի խաչն է մեզ օգնական:

Վարդան.—Հայոց հովիւք, ձեր ոչխարհները  
Է՞ր սար ու ձոր թափառական

Գազանաց ճանկ լնկած ողբան,

Է՞ր չը լսէք նոցա կական:

Զօր. Մենք պատրաստ ենք, մենքուխտել ենք  
Աւետարան, խաչն ՚ի ձեռին

Առաջնորդիլ Հայոց զօրքին

՚ի ժամ սրբոյ պատերազմին:

Յ. Կարինեան

**ԱՂԱՍՈՒ ՄՕՐ ԵՐԳԸ**

Զարթիր մանուկ իմ նազելի,

Բաց այդ պայծառ աչերը,

Թերթերոնքէդ քունը թոթուէ

Գիրկը հանգիր քո մօլը:

Բաւ քեզ որբան բարի հրեշտակը  
Հեքիաթ սսին երազում,  
Այժմ արի քեզ այն պատմեմ  
Ի՞նչ պիտ' տեսնիս աշխարհում.  
Զարդիր, որդեակ, քանի՞ քընես,  
Բաց աչերդ այդ նախշուն,  
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,  
Կեանք ու արև է տեսնում:  
Դուն կ'մնծանաս, բօյ կը քաշես  
Չինար բօյիդ ես զուրբան,  
Քեզ ուժ կը տան Մասսի քաջըլ,  
Ուր դու լինիս քաջ վաշդան,  
Իմ մատներով մի ոսկեթել  
Մէջքիդ գօտի եմ կարել,  
Գոտիկիցըդ թուր կը կապեմ,  
Այն էլ լինքս եմ արել: Զարթիր որդեակ.. և այն.  
Մեր բակումը ձի է կայնած,  
Քեզ է մընում անհամբեր,  
Զարթիր, որդեակ, քանի՞ քընես,  
Առ թուրը մահարեր.  
Քու հայ աղզը հեծեծում է,  
Զեռքը, ոտքը շղթայած,  
Քու եղբարքը գերութեան մէջ...  
Քաջ միայն դու ես քնած...

Թ. Պատկանեան:

### ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,  
Սխորժ, ընտանի իմ հոգու համար  
Առաջին գու խօսք, ականջիս հասած,  
Գու սիրոյ քաղցրիկ առաջուած,

Մանկական լեզուիս թոթովանք տըկար,  
Հընչում ես իմ մէջ դու միշտ անդադար:

Ո՞չ, ինչպէս պըզտոր է սըրտիս օրը-  
Երբ պանդուխտ էի օտարի տանը,  
Եթէ հարկ էր ինձ այլազգի լեզուով  
Իմ միտքը յայտնել օտար բառերով,  
Որ երբէք սիրել կարելի չէ ինձ,  
Որ ձայն ողջունի բնաւ իսկ չին ինձ:

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,  
Այդ ինչպէս քաղցըր հընչում ես ինձ դու.  
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ  
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ.  
Ասս թէ ահա գանչում էին ինձ  
Պապել ու հայրեր խոր գերեզմանից:

Հընչիր գու հընչիր այժմ և յաւիտեան  
Մայրենի լեզու, բարբառ սիրական,  
Արի, բարձրացիր հընութեան փոշուց,  
Դու իմ հայ լեզու, մոռացած վաղուց.  
Հզգեցիր նոր կեանք սուրբ գրուածքներով,  
Որ ամենայն սիրտ վասուի քո սիրով:

Ամին տեղ փշում է Աստուծոյ շունչը,  
Սուրբ է այն միւս, այլ ձև ու ոճը,  
Բայց թէ աղօթել գոհանալ պէտք էր,  
Իմ սըրաի սէրը յայտնել արժան էր,  
Իմ երանական մտածութիւնքը—  
Ապա կը խօսեմ իմ մօրըս խօսքը:  
գերմաներէնից՝ Ս. նազարեանց:

ԶԱԽՈՐԴ ՕՐԵՐ

Զախորդ օրերը ձմռայնման կուգան ու կերթան,  
Վհատիլու չէ, վերջ կունենան կուգան ու կերթան,  
Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ երկար,  
Որպէս յաճախորդ՝ շարւէ շարան կուգան ու  
կերթան:  
Փորձանք՝ հալածանք և նեղութիւն ազգերի գլխին,  
Ինչպէս ճանապարհի կարաւան կուգան ու կերթան,  
Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,  
Որքան մանիշակ, վարդ, պալասան կուգան ու  
կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ տկարը տիրի,  
Փոփոխակի անցքեր զանազան կուգան ու կերթան.  
Սրև առանց վախենալու ցայտում է լոյսը,  
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կերթան.

Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում մօր պէս,  
